

«ՈՒՆ ՏԱՃԿԱՑԵԱԼ ՎԱՐՂԱԴՆԱԿԻ ԿՈՉԵՑԵԱԼ»

Posted on July 18, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Դկ. Տ.Ներսես ավագ քին.Ներսեսյան, Լոնդոն, 18 .Հուլիս 2013

Նախկին հովիվ Ս.Եղիշե եկեղեցու

«Ես ասացի ի զարմանալ իմում, թե ամենայն մարդ սուտ է» (Սաղմոս 115)

«Ուն տաճկացեալ վարդապետ կոչեցեալ»

(Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի)

Հայ հավատացյալին մի անգամ եւս շնորհվում է առիթը՝ հիշելու եւ խոսելու հայ հոգեւորականի «հանեսոյան» արարքի համար: 1930 թ. Երեւանի քաղաքի խորհրդի նախագահ Գ. Հանեսոյանը քանդել տվեց Աբովյան փողոցում գտնվող 7-րդ դարի Ս.Պողոս-Պետրոս եկեղեցին: Մեղադրել Հանեսոյանին, որ նա տգետ է ու գռեհիկ, չի հասկանում եկեղեցական կառույցի արժեքը, դժվար չէ: Սակայն այդ կիսագրագետ տգետին չէ՞ որ նշանակել էին Երեւանի քաղաքագլուխ: Եվ ահա, նա ցանկանում է այնպիսի մի արարք կատարել, որ իրենից հետո մարդիկ երկար հիշեն ու խոսեն իր գործած «սխրանքի» մասին: Ոչ թե ստեղծել, կառուցել, արարել, այլ շուտափույթ քանդել-ոչնչացնել, ընդհանրապես ջնջել երկրի երեսից դարեր առաջ ժողովրդի հանճարով ստեղծած ճարտարապետական կոթողը: Այո, պատմության մեջ հանեսոյաններն էլ են հիշվում, բայց հիշվում են անեծքով ու նզովքով (Ստեփան Ստեփանյանց, «Հայ Առաքելական եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք», Եր.,1994, էջ.81): Հայ եկեղեցին այսօր ունի իր նորօրյա «հանեսոյանները»:

Դկ. Տ.Ներսես ավագ քին.Ներսեսյան, Լոնդոն, 18 .Հուլիս 2013

Նախկին հովիվ Ս.Եղիշե եկեղեցու

«Ես ասացի ի զարմանալ իմում, թե ամենայն մարդ սուտ է» (Սաղմոս 115)

«Ուն տաճկացեալ վարդապետ կոչեցեալ»

(Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի)

Հայ հավատացյալին մի անգամ եւս շնորհվում է առիթը՝ հիշելու եւ խոսելու հայ հոգեւորականի «հանեսոյան» արարքի համար: 1930 թ. Երեւանի քաղաքի խորհրդի նախագահ Գ. Հանեսոյանը քանդել տվեց Աբովյան փողոցում գտնվող 7-րդ դարի Ս.Պողոս-Պետրոս եկեղեցին: Մեղադրել Հանեսոյանին, որ նա տգետ է ու գռեհիկ, չի հասկանում եկեղեցական կառույցի արժեքը, դժվար չէ: Սակայն այդ կիսագրագետ տգետին չէ՞ որ նշանակել էին Երեւանի քաղաքագլուխ: Եվ ահա, նա ցանկանում է այնպիսի մի արարք կատարել, որ իրենից հետո մարդիկ երկար հիշեն ու խոսեն իր գործած «սխրանքի» մասին: Ոչ թե ստեղծել, կառուցել, արարել, այլ շուտափույթ քանդել-ոչնչացնել, ընդհանրապես ջնջել երկրի երեսից դարեր առաջ ժողովրդի հանճարով ստեղծած ճարտարապետական կոթողը: Այո, պատմության մեջ

հանեսողյաններն էլ են հիշվում, բայց հիշվում են անեծքով ու նզովքով (Ստեփան Ստեփանյանց, «Հայ Առաքելական Եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք», Եր., 1994, էջ.81): Հայ եկեղեցին այսօր ունի իր նորօրյա «հանեսողյանները»:

Եկեղեցին, իբրև աստվածային հաստատություն, ունի իր հավիտենական սկզբունքները, որոնցից չպետք է շեղվել երբեք: Որեւէ եկեղեցական, կաթողիկոսից բռնած մինչեւ եկեղեցու դռնապանը, իրեն իրավունք չպիտի վերապահի պատահական հովերին՝ առազաստ բանալով եկեղեցու նավը ավելոծության մատնել: Անհատական նախաձեռնությամբ «բարեկարգության» մանկունակ փորձերը եկեղեցու մեջ անկարգություն են անիշխանություն են առաջացնում՝ այն քայքայելու աստիճան: Հայաստանյայց եկեղեցու դարավոր, նախանձելի եւ պատկառելի ավանդություններն անլուրջ եւ անխոհեմ արարքներից պետք է պաշտպանել՝ նրա տեւականության եւ բարգավաճման սիրոյն:

Հայ եկեղեցականը պետք է իր ուժն ու կորովը դնի ուղիղ վարելու իր ակոսը եւ զգուշանա «յաջ եւ յահեակ խոտորելով. զառաջնոցն մեղանչելով. եւ վերջնոցն չար նշաւակ գոյով» (**Ժամագիրք**): Իր ձեռքը հոգեւոր մաճի վրա դնող մշակը պետք չունի ոտքի տակ պատվանդան դնելու:

Փառամոլությունը, որ դատապարտելի հատկանիշ է, քառիցս դատապարտելի կդառնա, երբ մի առաջնորդ չի վարանի անուղիղ եւ անխոստովանելի միջոցներ կիրառել՝ զոհացնելու համար իր անհագուրդ ցանկությունները: Աշխարհիկ տերերից ետ չեն մնում նաեւ հոգեւոր տերերից շատերը, որոնք փարիսեցիների նման «*մորթովք ոչխարի իբրեւ զգայլ արաբացի ծածկեն զգարշութիւնս իւրեամց եւ անողորմաբար արծակին ի վերա հոտին Զրիստոսի*» (*իւրեանց արաբական գարշելի գայլի մարմինը ծածկելով ոչխարի մորթով՝ անողորմաբար յարծակվում են Զրիստոսի հոտի վրա:*»): Մի առաջնորդի արհամարհական ու բռնակալական վերաբերմունքի հիմքում ընկած է չար նախանձի եւ վեհության պակասի զգացումը:

Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի ականավոր աստվածաբան վարդապետը գրում է. «*կամիս խոնարհեցուցանել զամենեսեան քեզ, խոնարհեցո զքեզ, քանզի թուի ինձ, թէ ոչ միայն մարդ խոնարհի խոնարհին, յայլ թէ ոչ իցէ յանդգնութիւն յասելս, թուի թէ Աստուած եւս խոնարհի խոնարհին*» («Գիրք Սրբազնագործութեան», էջ. 258): Մի առաջնորդ, որ ստախոսությունը համարում է առաքինություն եւ այն կիրառում իր գործունեության մեջ, օգտակար եկեղեցական չի կարող լինել եւ պետք է զրկել նրան հոգեւոր ծառայությունից ճիշտ այնպես, ինչպես ինքն անարդարորեն նենգապես պաշտոնից հեռացնում է քահանային: Առաջնորդի անպաշտպանելի արարքի պաշտպանությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, դժբախտաբար նույնքան անընդունելի է: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակությունը այնքան թուլացել է, որ ի վիճակի չէ նույնիսկ պաշտպանելու հոգեւոր ծառայությունից քմահաճորեն, անիրավաբար հեռացված

քահանային՝ իր նվիրյալ հոգեւոր աշխատանքից. «պարզապէս անոր համար, որ անոնց ներկայութեան ու նուիրեալ աշխատանքին մէջ վտանգ կը տեսնուի» :

Այսօր Լոնդոնի համայնքը զրկված է իր ծխատեղի քահանայից եւ եկեղեցուց, որովհետեւ եկեղեցու բարերարն ունի համարձակութիւնը, ըստ Լոնդոնի առաջնորդին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրահանգելու, որ «*եկեղեցին ինձ է պատկանում եւ ես կորոշեմ այդ եկեղեցու հոգեւորականի ով լինելը*»: Եթէ Հայոց եկեղեցու գերագույն պետը, իր կողմից նշանակված առաջնորդը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատած կանոնադրութեան համաձայն, օրինական կերպով ընտրված Համայնքային եւ եկեղեցական խորհուրդը չի կարող պաշտպանել իր ընտրած հովվին, ուրեմն մեր եկեղեցին դարձել է ծաղրանքի հաստատութիւն: Մի բարերար, որ հանդգնում է Կաթողիկոսին, օրինականորէն ընտրված եկեղեցական համայնքային մարմինն ստիպել կատարել իր քմահաճույքը, արժանի չէ «բարերար» տիտղոսին: Մեկը պետք է, որ մեր նորօրյա բոլոր «բարերար» կոչումին ցանկացողներին հիշեցնի անցյալի հայ մշակույթի, եկեղեցու եւ ազգի բազմահազար երախտավորների աղօթքը. «*ի հալալ արդեանց իմոց ետու սուրբ եկեղեցիս նուէր, եւ մի որ իշխեսցէ զսա հեռացուցանել կամ ծախելով, կամ գրաւելով, կամ իւր սեպհականելով: («Յիշատակարան «Մաշտոց», Ձեռ. Համար 4787):*

Ժնեւի, Նիսի, Մարսելիայի, Կանադայի եւ վերջերս Լոնդոնի եկեղեցական եւ համայնքային կանոնադրութիւնների նկատմամբ ցուցաբերած զվարթաբարո վերաբերմունքը պետք է մտահոգի ամեն հայի եւ հատկապէս Հայաստանյայց եկեղեցու եպիսկոպոսական դասին, որի ամփամները բաղկացած են 57 եպիսկոպոսներից եւ ընդ որում 27-ը կրում են Արքեպիսկոպոսի աստիճանը: Մինչդէռ Ավետարանը հուսադրում եւ խրախուսում է նրանց, որ «*հալածեալ իցեն վասն արդարութեան*», բայց նաեւ դատապարտում եւ նախատում է նրանց բոլորին, որ «*սպշութիւն ունի զսիրտ ձեր, աչք զոն եւ ոչ տեսանէք, ականջք են եւ ոչ լսէք*»: Հիսուսի այս բանադրանքը վերաբերում է Հայ եկեղեցու եպիսկոպոսական դասին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ոտնահարում է մի արքեպիսկոպոսի արժանապատվութիւնը, գետնին հավասարեցնում եկեղեցու ամենահին պաշտոններից մեկը օտարերկրյա մի օդանավակայանի սպասարահում, անարգանք է նաեւ Հայ եկեղեցու ողջ հոգեւոր դասին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձրացրած ճիշդ, թե՛ Ֆրանսիական դատարանի կողմից հանցագործութեան մէջ դատապարտված «*Վաչէ քահանայի սքեմը իմ պատիւս է, քուկդ ալ պետք է ըլլայ, իւրաքանչիւր հայ եկեղեցականինը պետք է ըլլայ*», ցուցաբերում է շժմելի աստիճան կողմնապահութիւն: Մինչդէռ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատրաստ է ամեն գնով պաշտպանել Լոնդոնի ստախոս, նենգամիտ եւ նախանձով տառապող առաջնորդին՝ ի գին տեղի հոգեւոր հովվին եւ անպատվել նաեւ Ֆրանսիայի Հայրապետական պատվիրակ եւ առաջնորդ արքեպիսկոպոսին, որովհետեւ վերջինս ի վիճակի չէ պաշտպանելու մի քահանայի, որ դատական հետապնդումի տակ է: Սա հոգեւորականին վայել կեցվածք չի:



Շահապիվանի ՇՀԱ (571-րդ) կանոնը սահմանում է. «*Եթե եպիսկոպոս որ գտի ի պղծութիւն կամ զինչ ի վատթար գործս եւ զառաքելական զպատիւն եւ սուրբ աթոռն անարգեաց, այսպիսումն ասէ գիր. Ընդ գողս ընթանայիր եւ ընդ շունս ղնէիր զբաժին քո»:* («*Եթե ունի ծառայելու կոչումը, պետք է իրանի զինքը դեպի գործ եւ ոչ թե նվիրվի իշխելու եւ տիրելու սին փառամոլությանը: Փառամոլության կիրքը շատ եկեղեցականների գահավեժ անկումի պատճառ է եղել»*) (Սաղմոս ԽԹ.18), եւ վկայութեամբ ի յայտ եկեցէ՝ յաթոռոյն եւ յիշխանութենէն մերժեցի ... «*Չի մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ»* (Սաղմոս ԽԸ.13):

Հայ եկեղեցու իշխող դասակարգը որդեգրել է «*Արեւ արքային»* վայել «*Եկեղեցին այդ ես եմ»* հանրահայտ կեցվածքը: Հայ եկեղեցու մեծավորները վարվում են ըստ այն սկզբունքին «**թէ որպէս ունէի իշխանութիւն ի տալն, նոյնպէս ունիմ եւ յառնուլն**»: Բայց այդպէս չէ իրականությունը. «*Այլ եւ ես անարժանս յանդգնիմ, թէ եւ անզգամութիւն է, Աստուած որ ստեղծ զարարածս, ոչ կարէ առանց իրաւանց եւ պատճառանաց առնուլ զկարգս եւ զաստիճան, զորս տուեալ է, թէպէտ անհուն է զօրութեամբ*»: Հայ աստվածաբանության քաջագիտակ Հովհաննես Ջուղայեցին այսօրվա հետադէմ կղերականների դիրքը որակել էր որպէս «անզգամութիւն» ու «հանդգնութիւն»: Նա պաշտպանում է քահանայական ձեռնադրությունը հետեւյալ հանդուգն եզրակացությամբ. «**եթէ Մեծն Աստվածն անգամ մարդուն պարգեւատրելիս ու պարգեւազրկելիս իրավունք չունի ու չի կարող գործել անձնիշխանաբար, ապա այդ իրավունքից զուրկ են առավել եւս երկրային «աստվածները»՝ լինեն դրանք Էջմիածնի կաթողիկոսները, արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները**»: Նա իր խոսքն ուղղելով հայոց կաթողիկոսին, գրում է. «...**Մի քեզ համարեցես զտալն եւ զառնուլն, վասն զի կարի յիմարութիւն է ցասելն, ես ետու եւ ես առնում**... աղաչեմ հայեաց ի գլուխս քո եւ արա, որպէս նա արար եւ գործեա, որպէս եւ ասացն. ոչ իմ տալ, նոյնպէս եւ տն տեսիդ աստուծոյ պարտ է զայս ասել եւ բարբառել եւ ոչ յանձնէ ինչ վարկանել»:

Քրիստոնեական կրոնքի մեծագոյն ներդրումը մարդկային բարոյական վարվելակերպի ոլորտում, պաշտպանումն էր մարդ անհատի՝ ընդդէմ կամայականության ու անձնիշխանության, որով կոպտորեն տրորվում ու ոտնհարվում էին մարդ անհատի իրավունքները: Հրաժարականը հանձնող Գերաշնորհ Նորվան Արք. Չաքարյանի այս խոսքերը. «*Հայ առաքելական եկեղեցոյ բարեկարգումը եթէ միայն ուղենիշ է կամ կանոնադրութիւն, նպատակը եթէ միայն վարչական կարգապահութիւն երաշխաւորելն է, ապա Հայոց Մայրավանքի մէջ բացակայ է շնորհքի եւ սիրոյ մթնոլորտը, յոգնեցուցիչ է անհատի պաշտամունքը*» դառն փորձից ելնող համարձակ ու լուսաւոր խորհուրդ է:

Իսկապէս հոգնեցուցիչ է հայ հավատացյալի համար ականատես լինել «բիզնես»ի հոգեբանություն ունեցող առաջնորդների եւ նրանց անկուշտ անձնապաշտության կարեկցանքին:

Նկար 1.- Լոնտոնի Ս. Եղիշէ եկեղեցին

Նկար 2.- Նորվան Արք. Չաքարեան ՀՀ Արտգործ նախարարի հետ, Փարիզ

